



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-1-Ո-Կ-4

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱՎՈՐ ՍՈՒՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ
ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

*նախագահությամբ՝
Բարձրագույն դատական խորհրդի նախագահ*

Կ. ԱՆԴԵԱՍՅԱՆԻ

մասնակցությամբ՝ անդամներ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑԻ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
Մ. ՄԱԿՅԱՆԻ
Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
Ս. ԶԻԶՈՅԱՆԻ
Վ. ՔՈԶԱՐՅԱՆԻ

Արդարադատության նախարարի տեղակալ

Լ. ԲԱԼՅԱՆԻ

Արդարադատության նախարարի ներկայացուցիչներ

Հ. ՄԱՆՈՅԱՆԻ
Ա. ՍՈՒԶՅԱՆԻ

*Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի
դատավոր Ս. Անտոնյանի ներկայացուցիչ*

Է. ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Թ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

դռնբաց նիստում, քննության առնելով Արդարադատության նախարարի՝ «Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 111-Ա որոշումը և կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ)՝ Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 22343/08) գործով 2015 թվականին դեկտեմբերի 03-ին կայացված վճռի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

Արդարադատության նախարարի (այսուհետ նաև՝ Նախարար) 2022 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 108-Ա որոշմամբ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Սուրեն Անտոնյանի (այսուհետ նաև՝ Դատավոր) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 111-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

2. Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը

Նախարարը վկայակոչել է Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (մինչև 07.04.2007 թվականը գործող խմբագրությամբ)՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 231.1-ին հոդվածի 1-3-րդ մասերը, 07.04.2007 թվականին «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-98-Ն օրենքով լրացված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-ին հոդվածի 4-րդ մասը, նոր բովանդակությամբ 231.1-ին հոդվածի 1-ին մասը, 231.2-րդ հոդվածի 1-ին մասը, 239-րդ հոդվածը և նշել, որ վերը նշված

իրավական նորմերի համադրությունից բխում է, որ խնդրո առարկա գործի քննության պահին գործող (մինչև ՀՕ-98-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությունը կիրառելի համարելով) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսել է վճարել բողոքի վերադարձման որոշման երկու տեսակ՝ որոշում բողոքի վերադարձման մասին առանց թերությունները վերացնելու և վճարել բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետի սահմանման, ինչպես նաև որոշում՝ բողոքի վերադարձման մասին՝ թերությունները վերացնելու և վճարել բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետի սահմանմամբ: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-ին հոդվածի 1-ին մասով ամրագրված են եղել բողոքի վերադարձման 3 հիմքեր՝

- եթե վճարել բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի պահանջներին (բողոքի ձևական բովանդակությանը վերաբերող պահանջներին անհամապատասխանություն),

- եթե վճարել բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի առաջին կետի պահանջներին (վճարել բողոքը վարույթ ընդունելու պահանջներին անհամապատասխանություն, այլ խոսքով՝ եթե բացակայում են բողոքը վարույթ ընդունելու հիմքերը),

- եթե բողոքը բերել է այն անձը, որի իրավունքը չի խախտվել:

Ըստ Նախարարի ստացվում է, որ թե՛ վճարել բողոքը վարույթ ընդունելու պահանջներին անհամապատասխանության, թե՛ վճարել բողոքի թերությունների վերացման անհրաժեշտության դեպքում ՀՀ վճարել դատարանն օժտված է եղել միևնույն դատագորությամբ՝ վճարել բողոքը վերադարձնելու տեսքով: Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տվյալ ժամանակ գործող կարգավորումներով նախատեսված չի եղել վճարել բողոքը վարույթ ընդունելը մերժելու ինստիտուտը: Անգամ այն դեպքում, երբ բողոքը բերել է այն անձը, որի իրավունքը չի եղել խախտված, օրենսդիրը նախատեսել է միևնույն դատավարական կառուցակարգի կիրառման հնարավորությունը՝ բողոքի վերադարձման տեսքով, ինչից ուղղակիորեն բխում է, որ այդ դեպքում ևս, ինչպես և վճարել բողոքի՝ վարույթ ընդունելու հիմքերի բացակայության դեպքում, հնարավոր չէ «թերությունների վերացման» միջոցով բավարարել անհրաժեշտ չափանիշը կամ բողոք բերելու իրավունք չունեցող սուբյեկտից փոխարկվել նման իրավունք ունեցող սուբյեկտի: Հետևաբար այն պայմաններում, երբ վճարել բողոքը վերադարձվել է առանց թերությունները շտկելու համար ժամկետի սահմանման, այն հավասարեցվել է դատավարության նույն կողմի վերստին բողոք ներկայացնելու արգելքին:

Արդյունքում, ըստ Նախարարի, թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ուղղակիորեն չի նախատեսել վճարել բողոքը վարույթ ընդունելը մերժելու ինստիտուտը, այնուամենայնիվ, բովանդակային առումով այն նույնացել է առանց ժամկետի սահմանման բողոքի վերադարձի հետ: Ընդ որում՝ առկա կարգավորումների համադրության և բողոքի ընդունումը մերժելու ինստիտուտի այդժամանակյա բացակայության պայմաններում տվյալ եղանակով վերադարձված բողոքի առկայությունն արգելք էր ստեղծում վճարել բողոքի վերստին ներկայացման և բողոքը վարույթ

ընդունելու առնչությամբ՝ անկախ 07.04.2007 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-98-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-ին հոդվածի 4-րդ մասի լրացման առկայության հանգամանքից:

Նախարարը նշել է, որ սույն գործի շրջանակներում Դատարանը 12.04.2007 թվականին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված բողոքը վարույթ ընդունելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ՝ միաժամանակ փաստելով բողոքի թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետի սահմանման աննպատակահարմարությունը: Այնուամենայնիվ, նույն գործով նույն կողմի վերստին ներկայացված բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արդեն մեկ այլ՝ 01.10.2007 թվականի որոշմամբ, չնայած բողոքը (առանց ժամկետի սահմանման) վերադարձնելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշման (այլ խոսքով՝ բովանդակային առումով բողոքը վարույթ ընդունելը մերժելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած որոշման հետ նույնական որոշման) առկայությանը, վարույթ է ընդունել բողոքը և արդյունքում բեկանել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած դատական ակտը՝ գործն ուղարկելով նոր քննության: Դատարանը, 12.04.2007 թվականին որոշմամբ փաստելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված ընդունելության հիմքերի բացակայությունը և նպատակահարմար չհամարելով սահմանել ժամկետ թերությունները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար, արձանագրել է բողոքում վերացման ենթակա թերությունների բացակայության հանգամանքը, այլ խոսքով՝ բողոքում առկա չեն եղել այնպիսի թերություններ, որոնք հնարավոր լինեք շտկել բողոքի վերադարձից հետո:

Այսպիսով, Դատարանի կողմից բողոքը վերադարձնելը կապված է եղել ընդունելիության չափանիշներին չբավարարելու, այլ ոչ թե վերացման ենթակա թերությունների առկայության հետ:

Ըստ Նախարարի, հատկանշական է, որ հայցվոր Օլգա Գասպարյանի (այսուհետ նաև՝ Հայցվոր) կողմից ներկայացված թե՛ առաջին (բողոքի 2-րդ էջ), թե՛ երկրորդ (բողոքի 3-րդ էջ) վճռաբեկ բողոքներում տառացիորեն նույն ձևակերպմամբ վկայակոչվել է ՀՀ վերաքննիչ դատարանի թույլ տված խախտումն առ այն, որ « (...) վերաքննիչ դատարանը վճռի պատճառաբանական մասում չի նշել այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս (...)»: Միաժամանակ, Դատարանը, 12.12.2007 թվականի որոշմամբ բեկանելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.03.2007 թվականի վճիռը, որպես բեկանման հիմք է մատնանշել նաև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից չնշելն այն օրենքները և իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վճիռ կայացնելիս: Ստացվում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանն առերեսվելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից թույլ տրված նույն խախտմանը՝ մի դեպքում դա բավարար չի դիտարկել որպես վարույթ ընդունելու հիմք, իսկ մեկ այլ դեպքում՝ նույն կողմի վերստին ներկայացրած բողոքի պայմաններում դիտարկել է որպես դատական ակտի բեկանման

հիմք (մինչդեռ Դատավորը բացատրության շրջանակներում վկայակոչում է բողոքների նույնական լինելու փաստը պայմանավորող՝ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի և հիմնավորումների տարբեր լինելը):

Նախարարը վկայակոչելով միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (*res judicata*), նշել է, որ այն ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ պետությունների՝ քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը որպես իրավական որոշակիության արդյունք ենթակա է հարգանքի: ՄԻԵԴ-ն իր մի շարք վճիռներում անդադարձել է *res judicata* սկզբունքի, այն է՝ վճիռները վերջնական լինելու սկզբունքի պահպանման խնդրին (...):¹

Արդյունքում, տվյալ գործով կարելի է փաստել, որ Դատարանն իր կողմից թույլ տրված դատավարական խախտումների հետ միաժամանակ, այն է՝ առանց ժամկետի սահմանման վերադարձված վճռաբեկ բողոքի և օրինական ուժի մետ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում վերստին ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելով և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած դատական ակտը բեկանելով թույլ է տվել նաև *res judicata* (դատարանի վճիռները վերջնական լինելու) սկզբունքի, ինչպես նաև անձի՝ ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված արդար դատաքննության և սեփականության իրավունքների խախտումներ:

Վերոգրյալի հիման վրա Նախարարը հանգել է այն եզրակացության, որ Դատարանի կողմից թույլ են տրվել դատավարական իրավունքի նորմերի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-ին հոդվածի 3-րդ մասի, 231.2-րդ հոդվածի 1-ին մասի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և նյութական իրավունքի նորմի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի պահանջների խախտումներ:

Նախարարը, վկայակոչելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 142-րդ հոդվածի 4-րդ մասը, նշել է, որ կարգապահական վարույթի փաստական հանգամանքների և կատարված իրավական վերլուծության համադրման արդյունքում կարող ենք փաստել, որ Դատարանը, մինչև կողմի վերստին ներկայացրած բողոքը վարույթ ընդունելով, ցուցաբերել է հայեցողական լիազորության իրացման օբյեկտիվ սահմաններից դուրս գտնվող կամայականություն: Դատարանն արձանագրելով առաջին բողոքի վարույթ ընդունելու հիմքերի բացակայությունը և նպատակահարմար չհամարելով կրկին բողոք ներկայացնելու համար ժամկետ սահմանելը՝ գիտակցել է այդպիսով նոր բողոք ներկայացնելու արգելքի սահմանումը, և դատավարության մասնակիցների մոտ վեճը լուծված լինելու վերաբերյալ համոզմունքի ձևավորման հնարավորությունը: Նման պայմաններում, ողջամտորեն

¹ Տե՛ս, Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի [ՄՊ] [Brumărescu v. Romania [GC]], թիվ 28342/95, § 61, ՄԻԵԴ 1999-VII, Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի [Ryabykh v. Russia], թիվ 52854/99, § 52, ՄԻԵԴ 2003-IX

անընդունելի է դառնում Դատավորի կողմից իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը չգիտակցելու հնարավորությունը, ինչն ուղղակիորեն փաստում է Դատավորի կողմից նշված խախտումները դիտավորությամբ կատարելու մասին:

Միննույն ժամանակ, Դատավորի բացատրությամբ դատական պրակտիկայի վկայակոչումը, որպես, ըստ էության, իր կողմից կատարված արարքի իրավաչափության հիմք (չնայած այն հանգամանքին որ որևէ կոնկրետ դատական գործի կամ ակտի օրինակ չի վկայակոչվել Դատավորի կողմից), ըստ Նախարարի, ամենևին չի բացառում մինչ 07.04.2007 թվականը դատավորների կամայական և օբյեկտիվ հիմքերից զուրկ տարբերակման արդյունքում վճռաբեկ բողոքները վերադարձնելու (առանց թերությունները վերացնելու պահանջի և առանց նման պահանջի համար ժամկետ սահմանելու) և հետագայում վարույթ ընդունելու միջոցով դատավարական նորմերի պահանջների դիտավորյալ խախտման հնարավորությունը: Հետևաբար, Դատավորի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են դիտավորությամբ, քանի որ Դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Նախարարը, անդրադառնալով Դատավորի այն պնդմանը, որ լիազոր մարմնի կողմից չի իրականացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի վերաբերյալ անհրաժեշտ և բավարար ուսումնասիրություն, նշել է, որ Օրենսգրքի 146-րդ և 142-րդ հոդվածների բովանդակությունից բխում է, որ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ ՄԻԵԴ-ի կայացրած ակտը բացառապես կարգապահական վարույթի հարուցման առիթ է, այլ ոչ թե դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք, որոնք թվարկված են արդեն Օրենսգրքի 142-րդ հոդվածում: Մինչ լիազոր մարմնի կողմից կարգապահական վարույթ հարուցելը գնահատման առարկա է դարձել խնդրո առարկա դատական գործի շրջանակներում Դատավորի կողմից նյութական կամ դատավարական նորմերի իրավունքների խախտում թույլ տրված լինելու հնարավորությունը, ինչի արդյունքում հաստատվել է Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առերևույթ առկայությունը:

Տվյալ գործի շրջանակներում, ըստ Նախարարի, որպես այդպիսի արարք է գնահատվել Դատավորի կողմից թիվ ԵԷԴ/0299/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում 01.10.2007 թվականին վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելն այն պայմաններում, երբ 12.04.2007 թվականին նույն Դատարանի կողմից որոշում է կայացվել նույն կողմի ներկայացրած նախորդ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված բողոքը վարույթ ընդունելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ (միաժամանակ փաստելով բողոքի թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետի սահմանման աննպատակահարմարությունը): Ընդ որում՝ Նախարարի գնահատմամբ, Դատարանի կողմից նման՝ օբյեկտիվ հիմքերից զուրկ կամայական վարքագծի դրսևորումը հեղինակագրվել է դատական իշխանությունը՝ հանգեցնելով դատական իշխանության նկատմամբ դատավարության մասնակիցների անվստահության ձևավորմանը, ինչպես նաև

կարծիք ստեղծել իրեն վերաբերող վեճի լուծման շուրջ արդարադատություն իրականացնող մարմնի կողմից կողմնակալ վերաբերմունք ունենալու վերաբերյալ: Հետևաբար, լիազոր մարմնի կողմից իրականացվել է Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի վերաբերյալ անհրաժեշտ և բավարար ուսումնասիրություն, ուստի, ըստ Նախարարի, Դատավորի ներկայացրած փաստարկներն անհիմն են:

Նախարարը, անդրադառնալով Դատավորի՝ բացատրությամբ վկայակոչված դիրքորոշմանն առ այն, որ ՄԻԵԴ-ի կողմից վճիռ կայացնելու պահի դրությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է դրսևորվել արդեն իսկ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 27.05.2008 թվականի թիվ ՍԴՈ-754 որոշմամբ ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմի չկիրառումը, նշել է, որ ՀՀ սահմանադրական դատարանը նշված որոշմամբ ՀՀ սահմանադրությանը հակասող է ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասը (նոր խմբագրությամբ 233-րդ հոդվածի 4-րդ մասը)՝ առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման առումով: Այս կապակցությամբ նշել է նաև, որ տվյալ վարույթի շրջանակներում Դատավորին վերագրվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-ին հոդվածի 3-րդ մասի, 231.2-րդ հոդվածի 1-ին մասի դատավարական իրավունքի նորմերի պահանջների խախտումներ:

Միաժամանակ վերլուծելով նշված որոշման շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումը՝ Նախարարը նշել է, որ տվյալ որոշման շրջանակներում բարձրացվել է նույնաբնույթ թերությունների առկայության դեպքում (այդ թվում թե՛ ձևական բնույթի թերությունների առկայության, թե՛ բողոք ընդունելու հիմքերի բացակայության պայմաններում) վճռաբեկ դատարանի կողմից կամայական մոտեցման ցուցաբերման խնդիրը, քանի որ իրավակիրառ պրակտիկայում նույնաբնույթ հիմքերի առկայության պայմաններում մի դեպքում վճռաբեկ բողոքի վերստին ներկայացնելու համար ժամկետ էր սահմանվում դատարանի կողմից, մեկ այլ դեպքում՝ չէր սահմանվում: Այլ խոսքով՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արձանագրվել է վճռաբեկ դատարանի կողմից նույնաբնույթ հիմքերի առկայության դեպքում բողոքը վերստին ներկայացնելու համար ժամկետ սահմանել-չսահմանելով հայեցողական լիազորության կամայական և ոչ իրավաչափ եղանակով իրացման խնդիրը, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել այնքանով, որքանով որ միննույն հիմքերի առկայության դեպքում բողոքը վերադարձնելիս (այդ թվում ձևական բովանդակությանը վերաբերող թերությունների առկայության դեպքում) կամայականության ցուցաբերման հնարավորություն էր ստեղծում ՀՀ վճռաբեկ դատարանի համար՝ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ սահմանելու կամ չսահմանելու միջոցով: Մինչդեռ, սույն միջնորդությամբ Դատավորին վերագրվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-ին հոդվածի 3-րդ մասի, 231.2-րդ հոդվածի 1-ին մասի խախտումներն այն արարքի համար, որ Դատարանը, չսահմանելով բողոքը վերստին

ներկայացնելու համար ժամկետ, այսինքն՝ արձանագրելով վերստին բողոք ներկայացնելու արգելքը, հետագայում նույն կողմի ներկայացրած բողոքը, այնուամենայնիվ, վարույթ է ընդունել: Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանը հենց նույն որոշման շրջանակներում բողոքի թերությունները վերացնելու համար ժամկետ չսահմանելը (այն դեպքում, երբ առկա է եղել ձևական բնույթի թերություն՝ բողոքատուն բողոքին չի կցել բողոքի պատճենը գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցներ) դիտարկել է որպես անձի՝ կրկին բողոք ներկայացնելու հնարավորության և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից դրա քննության ուղղակի արգելք, մասնավորապես նշելով, որ «(...) Այսինքն՝ նման ձևական բնույթի թերությունը (բողոքի պատճենը գործին մասնակցող անձանց չուղարկելը և բողոքը վերադարձնելը՝ թերությունը վերացնելու համար ժամկետ չսահմանելով) հիմք է հանդիսացել անձի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից իր գործի քննության հնարավորությունը բացառելու համար (...)»: Այլ խոսքով՝ ՀՀ սահմանադրական դատարանը ևս փաստել է, որ բողոքի թերությունները վերացնելու համար ժամկետ չսահմանելով բողոքը վերադարձվելու պարագայում բացառվում է կողմի՝ վերստին բողոք ներկայացնելը և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից այն վարույթ ընդունելը:

Ըստ Նախարարի հենց սա է նաև պատճառ հանդիսացել, որ հետագայում օրենսդիրը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու բովանդակային հիմքերի բացակայության և բողոքի ձևական սխալների առկայության դեպքում առաջացող իրավական հետևանքները տարբերակելու նպատակով 03.07.2014 թվականին ուժի մեջ մտած «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-49-Ն օրենքով վճռաբեկ բողոքի վերադարձի ինստիտուտին զուգահեռ ներդրել է նաև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու ինստիտուտը, իսկ օրենսդրի հետապնդած նպատակը բացահայտող նախագծի հիմնավորմամբ նման կառուցակարգի ներդրման անհրաժեշտության պատճառ է դիտարկվել նաև այն, որ «(...) Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու բովանդակային հիմքերին չհամապատասխանելու հիմքով վերադարձվելու դեպքում վճռաբեկ դատարանը կայացնում է «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում», որը մեր կարծիքով նույնպես ճիշտ չէ (...)»:

Հաջորդիվ, անդրադառնալով Դատավորի բացատրությամբ մատնանշված՝ ՄԻԵԴ-ի վճռի հիման վրա կարգապահական վարույթ հարուցելու առիթն Օրենսգրքից հանելու վերաբերյալ առաջարկին՝ Նախարարն արձանագրել է, որ տվյալ հարցի քննարկումը գտնվում է օրենսդրական քաղաքականության մշակման տիրույթում և առհասարակ դուրս է տվյալ կարգապահական վարույթով քննության ենթակա հարցերի շրջանակներից:

Այսպիսով, Դատավորի կողմից բացատրությամբ ներկայացված փաստարկները հիմնավոր չեն:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքի (ուժի մեջ է մտել

² Նախագծի հիմնավորումը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://parliament.am/draft_docs5/K-374lr_himnavorum.pdf

13.08.2022 թվականին) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտումներով, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթով էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

3. Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ

Սույն կարգապահական վարույթի շրջանակում Դատավորը Նախարարին ներկայացրած բացատրությամբ առաջարկել է կարճել հարուցված վարույթը՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի բացակայությամբ պայմանավորված, հետևյալ պատճառաբանությամբ.

Ըստ Դատավորի, տվյալ ժամանակահատվածում ձևավորված է եղել բոլորին այլ դատական պրակտիկա՝ պայմանավորված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 07.04.2007 թվականին ուժի մեջ մտած փոփոխությունների և լրացումների կապակցությամբ մինչ այդ ներկայացված և վարույթ չընդունված վճռաբեկ բողոքների քննության առնչությամբ:

Դատավորի դիրքորոշման համաձայն՝ չնայած Դատական դեպարտամենտից պահանջվել է թիվ ԵԷԴ/0299/02/08 քաղաքացիական գործը, սակայն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի վերաբերյալ անհրաժեշտ և բավարար ուսումնասիրություն չի իրականացվել: Չնայած ՄԻԵԴ-ի վճռի առկայությանը, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթից բացի բոլոր դեպքերում պետք է ուսումնասիրվեր նաև ներպետական օրենսդրության զարգացումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ տվյալ ժամանակահատվածի համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի վերաբերյալ առկա են եղել ՀՀ սահմանադրական դատարանի մի քանի որոշումներ, ընդ որում՝ դրանցից մեկով (27.05.2008 թվականի թիվ ՄԴՌ-754) ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել մեկ անգամ վճռաբեկ բողոք բերելու դատավարական օրենքով նախատեսված սահմանափակումը: Այսինքն՝ ՄԻԵԴ-ի կողմից վճիռ կայացնելու պահի դրությամբ

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է դրսևորվել արդեն իսկ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմի չկիրառումը:

Դատավորը նշել է, որ ՄԻԵԴ-ի վճռից չի երևում, որ առաջին վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքը չի ունեցել հիմնավորումներ՝ ի տարբերություն հատուկ արտոնագիր ունեցող և ՀՀ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանի կողմից ներկայացված երկրորդ բողոքի:

Միաժամանակ, Դատավորն առաջարկել է օրենսդրական նախաձեռնություններ կայացնել Օրենսգրքում փոփոխություն կատարելու՝ ՄԻԵԴ-ի վճռի հիման վրա կարգապահական վարույթ հարուցելու առիթն Օրենսգրքից հանելու համար:

Խորհրդին ներկայացրած պատասխանով Դատավորը հայտնել է, որ իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունն անհիմն է, այն կայացվել է ՀՀ սահմանադրության դրույթների կոպիտ խախտումներով և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Դատավորը նշել է, որ չնայած ՀՀ սահմանադրության հիմնարար 73-րդ հոդվածի 1-ին մասի, 164-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով, որն ընդունվել է 06.07.2022 թվականին և ուժի մեջ է մտել 13.08.2022 թվականին, սահմանվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նոր առիթ՝ Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ինչը մինչ այդ Օրենսգրքով նախատեսված չի եղել: Միաժամանակ Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1.1-րդ կետում կատարվել է լրացում:

Ըստ Դատավորի՝ ակնհայտ է, որ Օրենսգրքով սահմանված փոփոխությունն ու լրացումն ուղղակի հակասում են ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածի պահանջին, այն է՝ 2022 թվականին ընդունվել է դատավորի իրավական վիճակը վատթարացնող՝ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նոր առիթ սահմանող օրենք, որին նույն օրենքով տրվել է հետադարձ ուժ: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ ներկայացված միջնորդության պահանջը վերաբերում է Դատավորին 01.10.2007 թվականին կատարած խախտման համար պատասխանատվության ենթարկելուն, իսկ այդ կապակցությամբ կարգապահական վարույթն էլ հարուցվել է ենթադրյալ խախտման օրվանից ավելի քան 15 տարի անց՝ 30.11.2022 թվականին: Մինչև 06.07.2022 թվականին կատարված փոփոխությունն ու լրացումն Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով արդարադատություն կամ որպես դատարան օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական և դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով կարգապահական վարույթ չէր կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել էր ութ տարի, այսինքն՝ նման խախտման համար պատասխանատվության ենթարկելու ժամկետը երկարացվել է յոթ տարով: Դատավորը նշել է, որ վերոգրյալից պարզ է, որ եթե Օրենսգրքում 2022 թվականին չկատարվեին վերոգրյալ հակասահմանադրական

փոփոխությունն ու լրացումը, ապա իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել չէր կարող՝ ոչ միայն վարույթի հարուցման առիթ և հիմք չլինելու, այլև անգամ դրանց առկայության դեպքում՝ վարույթի հարուցման ժամկետն անցած լինելու պատճառով:

Ըստ Դատավորի՝ միաժամանակ ակնհայտ է, որ Օրենսգրքում կատարված այդ փոփոխությունն ու լրացումը կոպտորեն խախտել են ՀՀ սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատավորի անկախության սկզբունքը, քանի որ գործադիր իշխանությանը հնարավորություն են տվել վաղեմության չափազանց երկարատև ժամկետներ անցած լինելու պայմաններում պրակտիկա դարձնել դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելը և նրանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Խորհուրդ դիմելը:

Դատավորը նշել է, որ իրավունքի տեսությունից հայտնի է, որ բոլոր իրավախախտումները բաժանվում են երկու խմբի՝ հանցագործություններ և զանցանքներ: Զանցանքներն իրենց հերթին բաժանվում են վարչական և կարգապահական իրավախախտումների: Միաժամանակ ներպետական օրենքներով որոշակի իրավախախտման համար պատասխանատվության ժամկետները, որպես կանոն, սահմանվում են կամ դրանց կատարման (ավարտման) կա՛մ հայտնաբերման պահից, իսկ նույնիսկ այն դեպքում, երբ այդ ժամկետները հաշվարկվում են արարքի հայտնաբերման պահից, ապա դրանց սկիզբը և առավելագույն չափը, միևնույն է, կապվում է արարքի կատարման (ավարտման) ժամկետի հետ, քանի որ իրավագիտության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ չափից ավելի երկար ժամկետներ անցնելու դեպքում անձին պատասխանատվության ենթարկելն ինքնանպատակ է և չի ծառայում պատասխանատվության խնդիրներին:

Ըստ Դատավորի՝ սույն վարույթով իրեն վերագրվում է կարգապահական իրավախախտում, որը կատարվել և ավարտվել է 01.10.2007 թվականին: Այդ ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված է, որ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված լինելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները՝ տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից: Ստացվում է, որ եթե ինքը 01.10.2007 թվականին կատարած լինելը տվյալ ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ամենածանր հանցագործությունը, ապա նրա նկատմամբ 30.11.2022 թվականին քրեական վարույթ նախաձեռնվել չէր կարող՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու 15-ամյա վաղեմության ժամկետն անցած լինելու պատճառով:

Դատավորը նշել է, որ Նախարարի 26.12.2022 թվականի միջնորդությունն անհիմն է, դրա վերաբերյալ որոշումը կայացվել է ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածի, Օրենսգրքի 147-րդ և 148-րդ հոդվածների պահանջների խախտումներով և ենթակա է մերժման նաև հետևյալ հիմնավորումներով.

Կարգապահական վարույթի շրջանակներում ներկայացրած բացատրությամբ Դատավորը նշել է, որ վարույթ հարուցող մարմինը մինչև վարույթ հարուցելը չի կատարել

դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի վերաբերյալ անհրաժեշտ և բավարար ուսումնասիրություն: Վարույթ հարուցելու մասին որոշման մեջ Նախարարի պարտականությունները կատարող անձը բառացիորեն արտագրել է Արդարադատության նախարարության վերահսկողական վարչության պետ Հայկ Սանոյանի կողմից իրեն 28.11.2022 թվականի թիվ ն/28.1/18417-2022 զեկուցագրով ներկայացված տեղեկատվությունը և որևէ լրացուցիչ ուսումնասիրություն չի կատարել կարգապահական վարույթի հարուցման հիմքեր հայտնաբերելու համար: Որոշմամբ փորձ է արվել հերքել իր այդ առարկությունը, սակայն դա ոչ միայն չի հաջողվել, այլև որոշմամբ ևս կրկին թույլ է տրվել նույն խախտումը:

Դատավորը, վկայակոչելով Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ի վճիռը, նշել է, որ վճռի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ տվյալ գործով Հայաստանի Հանրապետությունը ՄԻԵԴ-ում պարտվել է ՀՀ կառավարության ներկայացուցչի անհաջող գործելակերպի պատճառով: Այսպես, թեև կառավարության ներկայացուցիչը ՄԻԵԴ-ում որոշակի առարկություններ, փաստարկներ ներկայացրել է, այնուամենայնիվ, Դատավորը նշել է, որ ՄԻԵԴ-ի վճռի 36-րդ, 39-րդ կետերում նշված «Կառավարությունը չի մատնանշել նաև, որ այդ իրավունքը բխել է որևէ ընդունված գործելակերպից», «Դատարան չի ներկայացվել որևէ նյութ, չի ներկայացրել տվյալ ժամանակահատվածին վերաբերող ներպետական որոշումների օրինակներ», «Սակայն Կառավարությունը չի ակնարկել, որ դա տեղի է ունեցել սույն գործում» արտահայտությունները վկայում են այն մասին, որ ՄԻԵԴ-ը մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ իր եզրահանգումները կատարել է կողմերի ներկայացրած փաստարկների և նյութերի հիման վրա, մինչդեռ «կառավարության ներկայացուցիչը, պարտավոր լինելով ներկայացնել տվյալ ժամանակաշրջանում վճռաբեկ բողոքների ընդունելիության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և Հայաստանի Հանրապետությունում առկա դատական պրակտիկան, անգամ չի ակնարկել դրանց մասին և չի ներկայացրել համապատասխան նյութեր: Մինչդեռ բացատրությունում հայտնել է և սույն պատասխանով պնդել է, որ տվյալ ժամանակահատվածում իրականում ՀՀ վճռաբեկ դատարանում առկա է եղել պրակտիկա, երբ վարույթ է ընդունվել մինչև նույն անձի երկրորդ անգամ ներկայացրած բողոքը:

Դատավորը նշել է, որ այդ հարցերը՝ 2007 թվականի դրությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և համապատասխան պրակտիկայի առկայությունը, չեն ուսումնասիրվել և չեն ներկայացվել ոչ միայն ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության ներկայացուցչի, այլև սույն կարգապահական վարույթը հարուցած անձի կողմից: Ընդ որում, վերջինիս կողմից դա պետք է կատարված լիներ մինչև կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելը, քանի որ մարդու իրավունքների խախտում արձանագրած ՄԻԵԴ-ի վճիռը հենց թեկուզև հակասահմանադրական օրենքի համաձայն միայն կարգապահական վարույթի հարուցման առիթ է, իսկ լրացուցիչ ուսումնասիրությունն անհրաժեշտ էր՝ կարգապահական վարույթի հարուցման հիմքի առկայությունը պարզելու համար: Հակառակ մեկնաբանության պարագայում կստացվի, որ միայն ՄԻԵԴ-ի որոշմամբ մարդու

իրավունքների խախտման փաստն արձանագրելը մեխանիկորեն կհանգեցնի դատավորի կարգապահական պատասխանատվության և Օրենսգրքով սահմանված՝ ենթադրյալ խախտման ուսումնասիրման անհրաժեշտությունը կվերանա, իսկ դա կարգավորող ընթացակարգային նորմերն էլ կդառնան լրիվ ավելորդ:

Ըստ Դատավորի՝ տվյալ ժամանակահատվածի օրենսդրությունն ու դատական պրակտիկան ուսումնասիրելը և վերլուծելը միջնորդություն ներկայացրած անձի պարտականություն էր, որը նա չի կատարել՝ այդպիսով ոչ միայն չհիմնավորելով իր միջնորդությունը բովանդակային առումով, այլև թույլ տալով Օրենսգրքով սահմանված ընթացակարգային նորմերի ներքոհիշյալ խախտումները: Դեռ ավելին՝ ՄԻԵԴ-ում գործի քննության ժամանակ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից դեռևս 27.05.2008 թվականի թիվ ՍԴՈ-754 որոշմամբ ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել մեկ անգամ վճռաբեկ բողոք բերելու սահմանափակումը, որի վերաբերյալ անդրադարձ չկա ՄԻԵԴ-ի վճռում:

Դատավորը, վկայակոչելով Օրենսգրքի 148-րդ հոդվածի 4-րդ մասը, նշել է, որ միջնորդության մասին որոշման պատճառաբանական մասում շարադրված չեն արարքը կարգապահական խախտում որակելու հիմնավորումները: Թեև միջնորդությունում կան ենթադրյալ խախտման իրավական հիմքերի մասին նշումներ և որոշակի եզրակացություն՝ «Դատարանի կողմից» դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ տրված լինելու մասին, սակայն միևնույն է, այդ եզրակացության իրավական և փաստական հիմնավորումները բացակայում են, քանի որ բացարձակապես վերլուծված և հաշվի առնված չեն տվյալ ժամանակահատվածում վճռաբեկ բողոքների ընդունելիության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներն ու դատական պրակտիկան:

Բացի այդ, ըստ Դատավորի, իրեն վերագրվող իրավախախտումը կատարվել և ավարտվել է 01.10.2007 թվականին: Նշված օրվա դրությամբ և մինչև 09.04.2018 թվականը գործող ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերն են՝ արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որպիսի հիմքերով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել դատավորի կողմից տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Տվյալ ժամանակահատվածում գործող, 27.11.2005 թվականի ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այդ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Դա նշանակում է, որ եթե խախտումը կատարվելուց հետո մեկ տարվա ժամկետում և մինչև 01.11.2008 թվականը դատավոր Սուրեն Անտոնյանի նկատմամբ ներկայումս նրան վերագրվող խախտման կապակցությամբ կարգապահական վարույթ չէր հարուցվել, ապա դրանից հետո այլևս նման վարույթ չէր կարող հարուցվել, քանի որ նրա իրավական վիճակը վատթարացնող, հետագայում ընդունված օրենքները հետադարձ ուժ չունեն:

Որոշման նկարագրական-պատճառաբանական մասը չի պարունակում տվյալ վերլուծությունը, ուստի որոշման մեջ շարադրված չեն արարքը կարգապահական խախտում որակելու հիմնավորումները, իսկ դրանում առկա ոչ կիրառելի հիմնավորումներն էլ անհիմն են:

Դատավորը նշել է, որ որոշման պատճառաբանական մասում միջնորդություն ներկայացրած անձն ընդլայնել է դատավորի թույլ տված ենթադրյալ խախտման շրջանակը՝ արձանագրելով հետևյալը. «Արդյունքում, տվյալ գործով կարելի է փաստել, որ Դատարանն իր կողմից թույլ տրված դատավարական խախտումների հետ միաժամանակ, այն է՝ առանց ժամկետի սահմանման վերադարձված վճռաբեկ բողոքի և օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում վերստին ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելով և Քաղաքացիական վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը բեկանելով թույլ է տվել նաև *res judicata* (դատարանի վճիռները վերջնական լինելու) սկզբունքի, ինչպես նաև անձի՝ Սահմանադրության 19-րդ հոդվածով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված արդար դատաքննության և սեփականության իրավունքների խախտումներ»:

Ըստ Դատավորի՝ ինչպես երևում է եզրահանգումից, միջնորդություն ներկայացրած անձն իրեն վերագրել է նաև «ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած դատական ակտը բեկանելու» խախտում, այն դեպքում, երբ ՄԻԵԴ վճռով որպես խախտում արձանագրվել է միայն 01.10.2007 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը: Եթե միջնորդություն ներկայացրած անձը ներկայացնում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նոր, լրացուցիչ հիմք, նոր խախտում, ապա նա պարտավոր է իր որոշման մեջ տալ նաև դրա հիմնավորումը, ինչը տվյալ դեպքում բացակայում է: Ընդ որում, որոշումը կայացրած անձի կողմից թույլ տրված այդ խախտումն այլևս որևէ կերպ չի կարող ուղղվել, քանի որ Օրենսգրքի 152-րդ հոդվածին համապատասխան՝ հարցի քննությունը Խորհրդում քննվում է որոշմամբ նշված կարգապահական խախտման սահմաններում:

Ըստ Դատավորի՝ քանի որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Խորհուրդը գործում է որպես վարչական դատարան, հետևաբար ստացվում է, որ իր միջնորդության փաստարկները չհիմնավորելով՝ միջնորդություն ներկայացրած անձը վարույթի իրավական և փաստական հիմքերն ապացուցելու պարտականությունը թողել է Խորհրդի վրա, հաշվի առնելով, որ նման պարտականությունը չի կարող դրվել պատասխանատվության կանչվող դատավորի վրա:

Դատավորը նշել է, որ լիազոր մարմին ներկայացված իր բացատրությունն ըստ էության չի ուսումնասիրվել, և մեջբերումներն էլ կրում են ձևական բնույթ, քանի որ նույնիսկ վկայակոչված ՀՀ սահմանադրական դատարանի 27.05.2008 թվականի թիվ ՍԴՈ-754 որոշման եզրափակիչ մասին հարկ չեն համարել ծանոթանալ, ուստի որպես լրացուցիչ նյութ ներկայացնում է նաև կարգապահական վարույթի հարուցման որոշման առիթով ներկայացված բացատրությունը: Ներկայացված միջնորդությունից այդպես էլ պարզ չէ, թե

դատարանի կողմից ներպետական դատավարական օրենքի՝, թե՞ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում է թույլ տրվել:

Ըստ Դատավորի՝ լիազոր մարմնին հարցադրում էր արվել կարգապահական պատասխանատվության հիմքի ծագման պահը (Ժամանակահատվածը) որոշելու հարցի վերաբերյալ, քանի որ ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ արարքը խախտում է որակվել ոչ թե կատարման փաստով, այլ դրան ՄԻԵԴ-ի կողմից տրված իրավական գնահատականի օրվա դրությամբ: Այսինքն՝ լիազոր մարմնին խնդիր էր ներկայացվել Օրենսգրքում կատարված փոփոխության և լրացման իրավական լինելու մասին, ինչը մնացել է անպատասխան, քանի որ պատասխանելու դեպքում ակնհայտ կլինեք կատարված լրացման և փոփոխության հակասահմանադրական բնույթը:

Դատավորը՝ հիշյալ հարցի վերաբերյալ վկայակոչելով Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը նշել է, որ, օրենսդրական կասկածելի նախաձեռնության հետևանքի մեղմում կարող էր դիտվել դրա հետադարձ ուժ ունենալու բացառումը: Մասնավորապես, բացատրությունում փաստարկել էր, թե ինչից ելնելով է առաջարկել Նախարարին հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ ՄԻԵԴ-ի վճռի հիման վրա դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթի վերաբերյալ իրավակարգավորումն Օրենսգրքից հանելու հարցով: Նախարարն այդ կապակցությամբ կատարել է երկու արձանագրում՝ տվյալ հարցի քննարկումը գտնվում է օրենսդրական քաղաքականության մշակման տիրույթում, առհասարակ դուրս է տվյալ կարգապահական վարույթով քննության ենթակա հարցերի շրջանակից:

Դատավորը, համաձայն լինելով առաջին արձանագրմանը, հայտնել է, որ վարույթ հարուցած անձը հենց օրենսդրական քաղաքականության մշակմանը կոչված պետական լիազոր մարմնին է, ուստի դիմել է իրավասու անձի: Ինչ վերաբերում է այդ հարցը սույն կարգապահական վարույթով քննարկման ենթակա հարցերի շրջանակից դուրս լինելուն, ապա այդ եզրահանգման հետ համաձայն չէ, քանի որ ինչպես նշել է բացատրությունում և սույն պատասխանում՝ դատավորի նկատմամբ վարույթ է հարուցվել և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդություն է ներկայացվել հակասահմանադրական օրենքի հիման վրա: Նման պայմաններում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում ՀՕ-333-Ն օրենքով 06.07.2022 թվականին ընդունված և 13.08.2022 թվականին ուժի մեջ մտած փոփոխությունները և լրացումները՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նոր առիթի և պատասխանատվության նոր ժամկետների մասով կիրառման ենթակա չեն, քանի որ դրանց կիրառման արդյունքում խախտվում է ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը (անձի իրավական վիճակը վաթարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը), իսկ դա ուղղակիորեն կապված է սույն կարգապահական վարույթի հետ:

Ըստ Դատավորի, կառավարության ներկայացուցչի կողմից չի ներկայացվել փաստարկ առ այն, որ ՄԻԵԴ ներկայացված բողոքի հիմքում դրված դատավարական նորմը ՀՀ

սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է սահմանադրությանը հակասող և անվավեր: Արդյունքում ստացվել է, որ ՄԻԵԴ-ի վճռի կայացման պահի դրությամբ իրավունքի խախտում է արձանագրվել ՀՀ սահմանադրությանը հակասող նորմը չկիրառելու համար:

Բացի այդ, որոշման պատճառաբանական մասը չի համապատասխանում Օրենսգրքի 148-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, քանի որ այնտեղ տեղ է գտել Օրենսգրքից կատարված մի մեջբերում, որը, Դատավորի կարծիքով առնչություն չունի սույն կարգապահական վարույթի հետ:

Դատավորը, վկայակոչելով միջնորդության պատճառաբանական մասի նախավերջին պարբերությունում արտահայտած դիրքորոշումը, նշել է, որ անհասկանալի է, թե ինչու է մեջբերվել Օրենսգրքի այն հոդվածը, որը վերաբերում է մինչև ՀՕ-333-Ն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված կարգապահական վարույթին, այն դեպքում, երբ սույն կարգապահական վարույթը հարուցվել է 26.12.2022 թվականին, այսինքն՝ Օրենսգրքի լրացումից և փոփոխությունից հետո: Իսկ եթե միջնորդություն ներկայացրած անձը գտել է, որ Օրենսգրքի այդ դրույթը կապ ունի սույն կարգապահական վարույթի հետ, ապա թույլ է տվել իր լիազորությունների վերազանցում, քանի որ նա իրավունք չունի Խորհրդին առաջարկել դատավորի նկատմամբ կիրառման ենթակա տույժի տեսակը, իսկ Օրենսգրքի այդ մեջբերմամբ, խոսելով «Էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժի» կիրառման հնարավորության մասին, ըստ էության ակնարկել է, թե սույն կարգապահական վարույթով ինչ տույժի կիրառում է ակնկալում ինքը Խորհրդից:

Դատավորը, անդրադառնալով Նախարարի այն եզրահանգմանը, որ. «Տվյալ գործի շրջանակներում որպես այդպիսի արարք է գնահատվել Դատավորի կողմից թիվ ԵԷԴ/0299/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում 01.10.2007 թվականին վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելն այն պայմաններում, երբ 12.04.2007 թվականին նույն Դատարանի կողմից որոշում է կայացվել նույն կողմի ներկայացրած նախորդ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված բողոքը վարույթ ընդունելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ (միաժամանակ փաստելով բողոքի թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետի սահմանման աննպատակահարմարությունը): Ընդ որում՝ լիազոր մարմնի գնահատմամբ, Դատարանի կողմից նման՝ օբյեկտիվ հիմքերից զուրկ կամայական վարքագծի դրսևորումը հեղինակագրվել է դատական իշխանությունը՝ հանգեցնելով դատական իշխանության նկատմամբ դատավարության մասնակիցների անվստահության ձևավորմանը, ինչպես նաև կարծիք ստեղծել իրեն վերաբերող վեճի լուծման շուրջ արդարադատություն իրականացնող մարմնի կողմից կողմնակալ վերաբերմունք ունենալու վերաբերյալ: Հետևաբար, լիազոր մարմնի կողմից իրականացվել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի վերաբերյալ անհրաժեշտ և բավարար ուսումնասիրություն, ուստի Դատավորի ներկայացրած փաստարկներն անհիմն են» նշել է,

որ հիշյալ եզրահանգումը որևէ փաստական հիմք չունի, հիմնագուրկ է, քանի որ իր կողմից դատավորի վարքագծի որևէ կանոնի խախտում չի արձանագրվել, իսկ այն հարցը, որի առնչությամբ հարուցվել է սույն վարույթը, վերաբերում է մի իրավական խնդրի, որի վերաբերյալ առկա է իրարամերժ պրակտիկա նույնիսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, իսկ իր կողմից վկայակոչված ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-754 որոշմամբ ՄԻԵԴ-ի վճռում նշված նորմի կիրառումն արդեն իսկ բացառվել էր Հայաստանի Հանրապետությունում, որի մասին փաստարկ չի ներկայացվել ՄԻԵԴ, ուստի դատական իշխանության հեղինակագրկման, դրա նկատմամբ «դատավարության մասնակիցների» անվստահության ձևավորման, արդարադատություն իրականացնող մարմնի կողմից կողմնակալ վերաբերմունք ունենալու մասին կարծիք ստեղծելու վերաբերյալ որոշման հետևություններն անհիմն են և ժամանակավրեպ:

Ամփոփելով վերը նշվածը՝ Դատավորը գտել է, որ առկա է Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքը, որն Օրենսգրքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 6րդ կետի համաձայն՝ դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճելու կամ 154-րդ հոդվածի 4րդ մասի 2-րդ կետին համապատասխան միջնորդությունը մերժելու հիմք է, հետևաբար հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրել է մերժել ներկայացված միջնորդությունը և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 06.07.2022 թվականին ընդունված և 13.08.2022 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-333-Ն օրենքի համապատասխան դրույթները ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին և 164-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր ճանաչելու դիմումով՝ անհրաժեշտության դեպքում կասեցնելով սույն կարգապահական վարույթը:

4. Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

4.1. Արդարադատության նախարարության վերահսկողական վարչության պետ Հ. Մանոյանի կողմից Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Գ. Մինասյանին հասցեագրված 28.11.2022 թվականի զեկուցագրով քննարկման է ներկայացվել Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (գանգատ թիվ 22343/08) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 03.12.2015 թվականի վճռի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանի կողմից թույլ տրված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի³ 231.1-ին հոդվածի 3-րդ մասի, 231.2-րդ հոդվածի 1-ին մասի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի պահանջների

³ Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 17.06.1998 թվականին, ուժը կորցրած ճանաչվել՝ 09.04.2018 թվականին:

առերևույթ խախտման հիմքով Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

4.2. Թիվ 22343/08 գանգատում, մասնավորապես, նշված է հետևյալը,

«9. 2004 թվականին Գ.-ն հայց է ներկայացրել դիմումատուի դեմ՝ նպատակ հետապնդելով վերցնել դիմումատուի կողմից օգտագործվող 38.75 քմ մակերեսով հողակտորը՝ պնդելով, որ սեփականության իրավունքներ ունի դրա նկատմամբ:

10. 2006 թվականի դեկտեմբերի 14-ին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների [ընդհանուր իրավասության] դատարանը բավարարել է հայցը՝ կարգադրելով դիմումատուին հողամասը փոխանցել Գ.-ին:

11. Չհստակեցված օրը դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել:

12. 2007 թվականի մարտի 9-ին Քաղաքացիական վերաքննիչ դատարանը բավարարել է վերաքննիչ բողոքը և մերժել Գ.-ի հայցը (...):

13. Սույն դատական ակտը ենթակա էր բողոքարկման վճռաբեկության կարգով՝ այն կայացնելու օրվանից վեց ամսվա ընթացքում:

14. 2007 թվականի մարտի 26-ին Գ.-ն 2007 թվականի մարտի 9-ի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք է բերել Վճռաբեկ դատարան՝ պնդելով, որ այն կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտմամբ: Իր վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար որպես հիմք՝ Գ.-ն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (քաղ. դատ. օր.) 231.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, նշել է, որ նյութական և դատավարական իրավունքի խախտումները կարող են ծանր հետևանքներ ունենալ, ինչպես օրինակ՝ իրեն՝ հողակտորի նկատմամբ իր սեփականության իրավունքներից զրկելը:

15. 2007 թվականի ապրիլի 7-ին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարվել են փոփոխություններ, որոնցով սահմանվել է, որ անձն իրավունք չունի մեկից ավելի անգամ վճռաբեկ բողոք բերել, եթե Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելիս թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար որոշակի ժամկետ չի սահմանել (...):

16. 2007 թվականի ապրիլի 12-ին Վճռաբեկ դատարանը որոշել է վերադարձնել Գ.-ի բողոքը՝ ճանաչելով այն անընդունելի՝ հիմնավորվածության բացակայության հիմքով ներկայացվել են հետևյալ պատճառները.

«Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (...) քննարկելով [Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատական ակտի դեմ Գ.-ի կողմից բերված բողոքը] վարույթ ընդունելու հարցը, գտել է, որ այն ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ՝

[Քաղաքացիական դատավարության օրենսգրքի] 230-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվի [Քաղաքացիական դատավարության օրենսգրքի] 231.2-րդ հոդվածի 1-ին մասով [պահանջվող] հիմքերից որևէ մեկը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում ներկայացված՝ [Քաղաքացիական դատավարության օրենսգրքի] 231.2-րդ հոդվածի 1-ին մասով [պահանջվող] ընդունելիության հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Վճռաբեկ

դատարանը գտնում է, որ գործի փաստական հանգամանքներում հավանական դատական սխալի և դրա հետևանքների վերաբերյալ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկներն անհիմն են:

(...) Միննույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ սահմանել:»:

17. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտել դրա հրապարակման պահից և ենթակա չէր բողոքարկման:

18. 2007 թվականի սեպտեմբերի 7-ին Գ.-ն Վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատական ակտի դեմ մեկ այլ վճռաբեկ բողոք է բերել Վճռաբեկ դատարան՝ պնդելով, որ տեղի են ունեցել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: 2007 թվականի մարտի 26-ի բողոքում ներկայացված հիմքից բացի՝ Գ.-ն իր բողոքը վարույթ ընդունելու համար որպես հիմք նշել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից իր գործով կայացման ենթակա դատական ակտը կարող է եսկան նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և որ ՀՀ վերաքննիչ դատարանի վիճարկվող դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի նախկինում կայացրած դատական ակտին:

19. 2007 թվականի հոկտեմբերի 1-ին Վճռաբեկ դատարանը որոշել է բողոքն ընդունել վարույթ՝ ներկայացնելով հետևյալ պատճառները.

«[Բողոքը] պետք է ընդունվի վարույթ, քանի որ այն բավարարում է [Քաղաքացիական դատավարության օրենսգրքի] 230-րդ հոդվածի և 231.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:»:

20. 2007 թվականի հոկտեմբերի 8-ին դիմումատուն Վճռաբեկ դատարանը Գ.-ի բողոքին պատասխան է ներկայացրել, որով, *inter alia* (ի թիվս այլնի), նշել է, որ Դատարանը, Գ.-ի երկրորդ բողոքը վարույթ ընդունելով խախտել է *res judicata* սկզբունքը և իր գույքային իրավունքները: Երբ Վճռաբեկ դատարանը 2007 թվականի ապրիլի 12-ի իր որոշմամբ վերադարձրել է Գ.-ի բողոքն առանց թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ սահմանելու Վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատական ակտը դարձել է վերջնական և ձեռք է բերել պարտադիր ուժ:

21. 2007 թվականի դեկտեմբերի 12-ին Վճռաբեկ դատարանը քննել է Գ.-ի բողոքն ըստ էության և որոշել այն մասնակիորեն բավարարել՝ բեկանելով Վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատական ակտն այն մասով, որն առնչվում էր հողամասի վերաբերյալ Գ.-ի գույքային պահանջին, և գործն ուղարկելով նոր քննության: Վճռաբեկ դատարանը գտել է, որ Քաղաքացիական վերաքննիչ դատարանն իր եզրահանգումներն անելիս հաշվի չի առել գործի նյութերում առկա փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև չի նշել ներպետական օրենսդրության այն դրույթները, որոնք դրվել են վճռի հիմքում (...):»:

4.3. Վճռի շրջանակներում ՄԻԵԴ-ն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«(...) 34. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ 2007 թվականի մարտի 9-ին Քաղաքացիական վերաքննիչ դատարանը գույքային

վեճի առնչությամբ վճիռ է կայացրել դիմումատուի օգտին: Այդ վճռի դեմ վերջին դատական աստիճանի հանդիսացող Վճռաբեկ դատարան բողոք է բերվել վեց ամսվա ընթացքում՝ համաձայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228.1-րդ հոդվածի 1-ին մասի: 2007 թվականի մարտի 26-ին դիմումատուի հակառակորդ կողմը վճռաբեկ բողոք է բերել: Միննույն ժամանակ, 2007 թվականի ապրիլի 7-ին Քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարվել են փոփոխություններ, որոնցով հստակորեն արգելվել է մեկից ավելի անգամ վճռաբեկ բողոք բերել, եթե բողոքը վերադարձնելիս Վճռաբեկ դատարանը՝ դրա մեջ ուղղումներ կատարելու և այն կրկին ներկայացնելու ժամկետ չի սահմանել: 2007 թվականի ապրիլի 12-ին Վճռաբեկ դատարանը որոշել է վերադարձնել 2007 թվականի մարտի 26-ի բողոքը՝ իր որոշման մեջ նշելով, որ այն նպատակահարմար չի համարել այդպիսի ժամկետ սահմանել: Անկախ դրանից՝ դիմումատուի հակառակորդ կողմը 2007 թվականի սեպտեմբերի 7-ին մեկ այլ վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանը որոշել է ընդունել վարույթ 2007 թվականի հոկտեմբերի 1-ին՝ հետագայում բեկանելով 2007 թվականի մարտի 9-ի դատական ակտը:

35. Կառավարությունը պնդել է, որ եթե նույնիսկ առաջին բողոքը վերադարձնելու ժամանակ, օրենքով արգելվում էր վճռաբեկ բողոք բերել մեկից ավելի անգամ, Վճռաբեկ դատարանը երկրորդ բողոքը վարույթ ընդունելու որոշում կայացնելիս առաջնորդվել է նախքան 2007 թվականի ապրիլի 7-ի փոփոխությունները գործող օրենքով: [Կառավարությունը] պնդել է, որ, նախքան այդ փոփոխությունները, սահմանված վեց ամսվա ընթացքում Վճռաբեկ դատարան կարող էր բերվել անսահմանափակ թվով վճռաբեկ բողոք: Վճռաբեկ դատարանն առաջնորդվել է այդ կանոններով, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից վճիռ կայացնելու պահին գործում էին այդ կանոնները, մինչդեռ 2007 թվականի ապրիլի 7-ի փոփոխություններով դիմումատուի հակառակորդ կողմի իրավիճակը վատթարացել է, և հետևաբար, դրանք չեն կիրառվել, ինչպես պահանջվում էր օրենքով: Դատարանի համար, սակայն, այդ պնդումները համոզիչ չեն հետևյալ պատճառներով:

36. Դատարանը նախ նշում է, որ նախքան 2007 թվականի ապրիլի 7-ը՝ Հայաստանի քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ որևէ հստակ դրույթ նախատեսված չէր, որով քաղաքացիական վարույթի կողմին թույլատրվեր երկու անգամ, առավել ևս անսահմանափակ թվով վճռաբեկ բողոք բերել: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի որևէ դրույթով այդպիսի իրավունք ամրագրված չէր: Ընդհակառակը, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածով սահմանված էր, որ Վճռաբեկ դատարանի որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն: Ավելին, Կառավարությունը չի մատնանշել նաև, որ այդ իրավունքը բխել է որևէ ընդունված գործելակերպից: Ընդունելիության պահանջներին չհամապատասխանելու հիմքով բողոքները վերադարձնելու ընթացակարգը ներդրվել է 2005 թվականի նոյեմբերին (տե՛ս Բորիսենկոն և Երևանյան բազալտ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի (որոշում) [Borisenko and Yerevanyan Bazalt Ltd v. Armenia (dec.)], թիվ 18297/08, 2009 թվականի ապրիլի 14), սակայն Դատարան չի ներկայացվել որևէ նյութ, որը կվկայեր, որ Վճռաբեկ դատարանի

կողմից նոր կանոնները հեղինակավոր կերպով մեկնաբանվել են այնպես, որ դրանցով կողմերին թույլատրվել է շարունակաբար բողոքներ ներկայացնել՝ մինչև բողոք ներկայացնելու ժամկետի ավարտը: Կառավարությունը նաև չի ներկայացրել տվյալ ժամանակահատվածին վերաբերող ներպետական որոշումների օրինակներ՝ ցույց տալու, որ սույն գործով տեղի ունեցածը սովորական գործելակերպ էր, այլ ոչ թե ինչ-որ բացթողման հետևանք:

(...) 38. Ճիշտ է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ընդհանուր կանոնից եղել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված մեկ բացառություն, որով վարույթի կողմին թույլատրվել է կրկին բողոք ներկայացնել, եթե Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն պարունակում է թերություններ, որոնք կարող են վերացվել, և այդ դեպքում դա կատարելու և բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ է սահմանել: Սակայն այդ բացառությունը կիրառելի չէ սույն գործով, քանի որ Վճռաբեկ դատարանը 2007 թվականի ապրիլի 12-ի իր որոշման մեջ հստակորեն նշել է, որ այն նպատակահարմար չի համարել այդպիսի ժամկետ սահմանել (տե՛ս վերևում՝ 16-րդ պարբերությունը):

39. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը եզրակացնում է, որ, երբ 2007 թվականի ապրիլի 12-ին Վճռաբեկ դատարանը որոշել է վերադարձնել դիմումատուի հակառակորդ կողմի՝ 2007 թվականի մարտի 26-ին բերած վճռաբեկ բողոքը, Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատական ակտն այլևս բողոքարկման ենթակա չէր և դարձել էր վերջնական ու պարտադիր ուժ ունեցող: Հետևաբար, միևնույն կողմի բերած մեկ այլ բողոքն ընդունելով և այնուհետև այն բավարարելով՝ Վճռաբեկ դատարանը բեկանել է վերջնական դատական ակտ: Դատարանն ընդունում է, որ որոշակի հանգամանքներում իրավական որոշակիությունը կարող է խախտվել՝ «էական թերությունը» կամ «ոչ պատշաճ իրականացված արդարադատությունն» ուղղելու նպատակով:⁴ Սակայն Կառավարությունը չի ակնարկել, որ դա տեղի է ունեցել սույն գործում: Գործի նյութերից նույնպես չի բխում, որ հետապնդվել է հենց այդ նպատակը: Ընդհակառակը, պարզվում է, որ Վճռաբեկ դատարանը այս գործով պարզապես կայացրել է նոր որոշում, ընդ որում, առանց որևէ իրավական հիմքի: Ըստ այդմ, այն խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված *res judicata* սկզբունքը:

40. Համապատասխանաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

(...) 47. (...) Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ ստորադաս դատարանի միևնույն դատական ակտի դեմ երկրորդ անգամ վճռաբեկ բողոք բերելու իրավունք նախատեսված չի եղել: Հետևաբար, երկրորդ վճռաբեկ բողոքը բավարարելով և Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 9-ի վերջնական դատական ակտը բեկանելով՝ Վճռաբեկ դատարանը չի գործել «այն

⁴ Տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Ռյաբիխը՝ վերևում հիշատակված, § 52, Ռոշկան ընդդեմ Մոլդովայի [Roșca v. Moldova], թիվ 6267/02, § 52, 2005 թվականի մարտի 22, և Սուտյաժնիկն ընդդեմ Ռուսաստանի [Sutyazhnik v. Russia], թիվ 8269/02, § 35, 2009 թվականի հուլիսի 23:

պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով»: Ուստի, միջամտությունը դիմումատուի գույքային իրավունքներին, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, օրինական չի եղել:

48. Համապատասխանաբար, տեղի է ունեցել թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:»

4.4. Խնդրո առարկա քաղաքացիական գործի շրջանակներում, Դատավորի մասնակցությամբ Վճռաբեկ դատարանի 12.04.2007 թվականին կայացված որոշմամբ արձանագրվել է հետևյալը.

«(...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն 231.2-րդ հոդվածի առաջին մասի որևէ կետի հիմնավորումները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում նշված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված ընդունելության հիմքերը սույն գործով բացակայում են: Մասնավորապես, վճռաբեկ բողոքում վկայակոչված փաստարկները՝ դատական սխալի հնարավոր առկայության և դրա հետևանքների մասին, Վճռաբեկ դատարանը սույն գործի փաստերից ելնելով հիմնավոր չի համարում:

Վերը նշված պահանջի խախտումը վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմք է, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում նույն օրենսգրքի 223-րդ, 230-րդ և 231.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում սահմանել ժամկետ թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար (...):»

Արդյունքում Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 09.03.2007 թվականի վճռի դեմ Հայցվորի (նրա ներկայացուցչի) կողմից ներկայացված 26.03.2007 թվականի բողոքը վերադարձնելու վերաբերյալ:

4.5. Խնդրո առարկա քաղաքացիական գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանի դատավոր Սուրեն Անտոնյանի մասնակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր մեկ այլ՝ 01.10.2007 թվականի որոշմամբ որոշել է վարույթ ընդունել Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 09.03.2007 թվականի վճռի դեմ նույն Հայցվորի (նրա ներկայացուցչի) 07.09.2007 թվականի մեկ այլ բողոքը, հաշվի առնելով այն, որ դրանում պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ, 231.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

4.6. Դատարանի դատավոր Սուրեն Անտոնյանի մասնակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր կայացրած մեկ այլ՝ 12.12.2007 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանել է Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 09.03.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան այլ կազմով նոր քննության:

5. Հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում էական նշանակություն ունեցող իրավական հարցադրումները

Հաշվի առնելով Նախարարի կողմից միջնորդությունում բերված փաստարկներն ու հիմնավորումները և դրանց դեմ Դատավորի կողմից ներկայացված պատասխանը՝ Խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

5.1. արդյո՞ք Դատավորը թիվ ԵԷԴ/0299/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում 01.10.2007 թվականին որոշում կայացնելով ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին, այն պայմաններում, երբ 12.04.2007 թվականին նույն Դատարանի կողմից որոշում է կայացվել նույն կողմի ներկայացրած նախորդ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բողոքը վարույթ ընդունելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ, թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-ին հոդվածի 3-րդ մասի, 231.2-րդ հոդվածի 1-ին մասի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և նյութական իրավունքի նորմի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի պահանջների ենթադրյալ խախտումներ,

5.2. արդյո՞ք թիվ ԵԷԴ/0299/02/08 քաղաքացիական գործերով Դատավորի կողմից թույլ տրված ենթադրյալ խախտումն Օրենսգրքի իմաստով կարող է գնահատվել, որպես էական կարգապահական խախտում, որն ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

6. Խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, լսելով Արդարադատության նախարարի հաղորդումը, ինչպես նաև Արդարադատության նախարարի ներկայացուցիչների դիրքորոշումները, Դատավորի ներկայացուցչի պատասխանը, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Խորհուրդն արձանագրում է, որ դատավորի, դատարանի և դատական իշխանության անկախության վերաբերյալ իրավական կարգավորումներն ամրագրված են ինչպես

ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերով, ընդ որում դատավորի անկախության վերաբերյալ իրավական կարգավորումների ընդհանուր իրավական բովանդակության էությունը կայանում է նրանում, որ դատավորի անկախությունը հանդիսանում է ոչ միայն նրա իրավունքը, այլ հասարակության՝ օրինական և հիմնավորված արդարադատության իրականացման ապահովման երաշխիքը:

Խորհուրդը հարկ է համարում նշել, որ դատավորի անկախության երաշխիքներն ապահովող գործիքակազմում կարևոր տեղ է զբաղեցնում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը:

Խորհուրդն իր սահմանադրական առաքելության հաշվառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը պետք է իրականացնի այնպես, որպիսի չվտանգի դատավորի և դատարանի անկախության սահմանադրական պահանջը:

Օրենսգիրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, (...) որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենսգիրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *Էական կարգապահական խախտում է՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակազրկման:*

Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված*

չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերահաստատելով թիվ ԲԴԽ-105-Ո-Կ-26 որոշմամբ⁵ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Խորհուրդը հարկ է համարում կրկին արձանագրել, որ կասկածից վեր է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման հիման վրա հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում Խորհուրդը, յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, պետք է գնահատի թույլ տրված ենթադրյալ կարգապահական խախտման բնույթը՝ հստակեցնելով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ապահովելով Օրենսգրքի նորմերի որոշակի կիրառելիությունը և պրակտիկայի կանխատեսելիությունը:

Վերը նշվածն ամրագրվել է նաև Ս«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն օրենքի հիմնավորումներում, իսկ հետագայում վերահաստատվել է նաև Ս«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքի հիմնավորումներով, որտեղ բացահայտվում է նաև օրենսդրի կամքը: Մասնավորապես, ըստ հիշյալ փոփոխությունների հիմնավորումների համապատասխանաբար նշվել է՝

- «(...) Նման մոտեցում ամրագրվել է այն նպատակով, որպեսզի մի կողմից դատավորը պատասխանատվության չենթարկվի պարզապես փաստերի ու ապացույցների իր գնահատման համար, մյուս կողմից՝ գնահատման ենթարկվի դատավորի վերաբերմունքը մարդու իրավունքների նկատմամբ՝ որպես բարեվարքության կարևոր ցուցանիշ (...):»

- «(...) Նախ, ինչպես բխում է Դատական օրենսգրքի կարգավորումներից կարգապահական պատասխանատվության հիմքը ոչ թե ինքնին ՄԻԵԴ վճիռն է, այլ դրանով բացահայտված մարդու իրավունքների հիմնարար խախտումը, որը ենթակա է գնահատման որպես դատարան գործող Խորհրդի կողմից (...):»

Խորհուրդն արձանագրում է, որ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննության է առնում Օրենսգրքի 152-րդ հոդվածում ամրագրված դրույթի պահանջներին համապատասխան, այն է՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Խորհրդում կատարվում է միայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշմամբ նշված կարգապահական խախտման սահմաններում:

Այդ կապակցությամբ Խորհրդի իրավական հետազոտման առարկան սահմանափակվում է միջնորդությամբ ներկայացված հիմքերի և հիմնավորումների շրջանակներում:

Խորհուրդը հարկ է համարում արձանագրել նաև, որ Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու

⁵ Տես, Բարձրագույն դատական խորհրդի 2022թ. դեկտեմբերի 26-ի թիվ ԲԴԽ-105-Ո-Կ-26 որոշումը:

հիմքի առկայության ապացուցման պարտականությունը կրում է կարգապահական վարույթը հարուցած մարմինը:

Վերը նշված հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ տվյալ դեպքում վարույթ հարուցող մարմինն է կրում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայությունն ապացուցելու պարտականությունը: Վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ձեռք բերվեն բավարար ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ բավարար կլինեն Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար և կհաստատեն վերջինիս մեղքը:

Քննարկվող պարագայում, ներկայացված միջնորդությամբ, Դատավորի կողմից թույլ տրված ենթադրյալ խախտման հիմքեր ներկայացված են դատավարական իրավունքի նորմերի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ 231.1-ին հոդվածի 3-րդ մասի, 231.2-րդ հոդվածի 1-ին մասի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի» 6-րդ հոդվածի 1-ին կետի և նյութական իրավունքի նորմի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի պահանջների խախտումներ:

Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 31-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից՝ բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:»:

⁶ Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 17.06.1998 թվականին, ուժը կորցրած ճանաչվել՝ 09.04.2018 թվականին:

Մինչև 07.04.2007 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 231.1-ին հոդվածի համաձայն՝

«1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 230-րդ հոդվածի և 231.2-րդ հոդվածի առաջին կետի պահանջներին, կամ բողոքը բերել է այն անձը, որի իրավունքը չի խախտվել:

2. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում բողոքը ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

3. Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ կարող է սահմանել ժամկետ՝ թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար»:

07.04.2007 թվականին «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-98-Ն օրենքով ՔԴՕ 231.1-ին հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ՝ նոր 4-րդ մասով. «4. *Առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման կայացման դեպքում բողոք բերող անձը չի կարող կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել*»:

Մինևսույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-ին հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 230-րդ հոդվածի և 231.2-րդ հոդվածի առաջին կետի պահանջներին, կամ բողոքը բերել է այն անձը, որի իրավունքը չի խախտվել, կամ վճռաբեկ բողոքը ներկայացվել է վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ժամկետից ուշ, և բացակայում է այն վերականգնելու մասին միջնորդությունը, կամ մերժվել է նման միջնորդությունը, կամ առկա է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

1) վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտին, կամ

3) ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ, կամ

4) առկա են նոր երևան եկած հանգամանքներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Խորհուրդը հարկ է համարում նշել, որ ինչպես վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից, այնպես էլ Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ի կողմից

կայացված վճռի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նախքան 2007 թվականի ապրիլի 7-ը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ որևէ հստակ դրույթ նախատեսված չի եղել, որով քաղաքացիական վարույթի կողմին թույլատրվեր երկու անգամ, առավել ևս անսահմանափակ թվով վճռաբեկ բողոք ներկայացնել: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի որևէ դրույթով այդպիսի իրավունք ամրագրված չի եղել, ընդհակառակը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածով սահմանված էր, որ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Միաժամանակ հարկ է նշել, որ թիվ ԵԷԴ/0299/02/08 քաղաքացիական գործի քննության պահին գործող (մինչև ՀՕ-98-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությունը կիրառելի համարելով) օրենսդրությամբ ընդհանուր կանոնից եղել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված մեկ բացառություն, որով վարույթի կողմին թույլատրվել է կրկին բողոք ներկայացնել, եթե ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն պարունակում է թերություններ, որոնք կարող են վերացվել, և այդ դեպքում դա կատարելու և բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանվել է ժամկետ: Սակայն այդ բացառությունը կիրառելի չէ սույն գործով, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանը 2007 թվականի ապրիլի 12-ի իր որոշման մեջ հստակորեն նշել է, որ այն նպատակահարմար չի համարել այդպիսի ժամկետ սահմանել (տե՛ս Վճռի 38-րդ պարբերությունը):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Խորհուրդը կարևոր է համարում նշել, որ երբ 2007 թվականի ապրիլի 12-ին ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է վերադարձնել բողոք ներկայացրած անձի հակառակորդ կողմի՝ 2007 թվականի մարտի 26-ին բերած վճռաբեկ բողոքը՝ նշելով, որ «(...) Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ սահմանել:», Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատական ակտն այլևս բողոքարկման ենթակա չի եղել և դարձել է վերջնական ու պարտադիր ուժ ունեցող: Հետևաբար, միննույն կողմի բերած մեկ այլ բողոքն ընդունելով և այնուհետև այն բավարարելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել է վերջնական դատական ակտ: ՄԻԵԴ-ն ընդունել է, որ որոշակի հանգամանքներում իրավական որոշակիությունը կարող է խախտվել՝ «էական թերությունը» կամ «ոչ պատշաճ իրականացված արդարադատությունն» ուղղելու նպատակով,⁷ սակայն ընդգծել է, որ թիվ ԵԷԴ/0299/02/08 քաղաքացիական գործի նյութերից չի բխում, որ հետապնդվել է հենց այդ նպատակը, ընդհակառակը, ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ պարզվում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը այս գործով պարզապես կայացրել է նոր որոշում, ընդ որում, առանց որևէ իրավական հիմքի, որի արդյունքում խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված *res judicata* սկզբունքը:

⁷ Տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Ռյաբիխը՝ վերևում հիշատակված, § 52, Ռոշկան ընդդեմ Մոլդովայի [Roșca v. Moldova], թիվ 6267/02, § 52, 2005 թվականի մարտի 22, և Սուտյաշնիկն ընդդեմ Ռուսաստանի [Sutyazhnik v. Russia], թիվ 8269/02, § 35, 2009 թվականի հուլիսի 23:

Տվյալ դեպքում Խորհուրդն արձանագրում է նաև, որ ՄԻԵԴ-ը Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 22343/08) գործով 2015 թվականին դեկտեմբերի 03-ի վճռով արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ այն է արդար դատաքննության և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի՝ այն է սեփականության պաշտպանության իրավունքի խախտումներ: Միաժամանակ նշելով, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ընդհանուր կանոնից եղել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված մեկ բացառություն, որով վարույթի կողմին թույլատրվել է կրկին բողոք ներկայացնել, եթե ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն պարունակում է թերություններ, որոնք կարող են վերացվել, և այդ դեպքում դա կատարելու և բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ է սահմանել: Սակայն ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ այդ բացառությունը կիրառելի չէ սույն գործով, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանը 2007 թվականի ապրիլի 12-ի իր որոշման մեջ հստակորեն նշել է, որ այն նպատակահարմար չի համարել այդպիսի ժամկետ սահմանել:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին: Մասնավորապես, վկայակոչված որոշմամբ արձանագրվել է, որ արդար դատաքննության իրավունքը պահպանված է այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի:

Միաժամանակ Խորհուրդը սույն վարույթի շրջանակներում կանոնում է ՄԻԵԴ-ի դիրքորոշումն առ այն, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի զերակայությունը, որի հիմնարար հայեցակետերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն *inter alia* պահանջում է, որ դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի,⁸ միաժամանակ նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է *res judicata* սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որ կողմերից ոչ մեկը չունենա իրավունք պահանջելու վերջնական և պարտադիր դատական ակտի վերանայում՝ ուղղակի գործի կրկնակի քննության և գործով նոր ակտի կայացման նպատակով: Այսինքն՝ հարցի առնչությամբ երկու կարծիքի առկայության հնարավորությունը չպետք է հիմք հանդիսանա կրկնակի քննության համար: Նահանջն այդ սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում:

⁸ Տե՛ս, Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, գանգատ թիվ 28342/95, կետ 61:

Վերը նշվածի համատեքստում՝ Խորհուրդը, սույն կարգապահական վարույթի շրջանակներում հարկ է համարում արձանագրել, որ Դատարանն իր կողմից թույլ տրված դատավարական խախտումների հետ միաժամանակ, այն է՝ առանց ժամկետի սահմանման վերադարձված վճռաբեկ բողոքի և օրինական ուժի մետ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում վերստին ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելով և Քաղաքացիական վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը բեկանելով թույլ է տվել նաև *res judicata* (դատարանի վճիռները վերջնական լինելու) սկզբունքի, ինչպես նաև անձի՝ ՀՀ սահմանադրության 19-րդ և 31-րդ հոդվածներով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված արդար դատաքննության և սեփականության իրավունքների խախտումներ:

Անդրադառնալով ինչպես Դատավորի բացատրությամբ, այնպես էլ Խորհրդի նիստի ընթացքում Դատավորի ներկայացուցչի կողմից ներկայացված այն պնդմանը, որ մինչև 07.04.2007 թվականի ՀՀ վճռաբեկ դատարանում առկա է եղել համատարած դատական պրակտիկա, առ այն, որ վճռաբեկ բողոքները վերադարձվում էին մատնանշումով, որ «Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում սահմանել ժամկետ՝ թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար», որից հետո հետագայում կրկին ներկայացնելու դեպքում դրանք ընդունվում էին վարույթ՝ Խորհուրդը հարկ է համարում նշել, որ 2006թ. և 2007թ. (մինչև 07.04.2007թ.) բացակայել է վերջիններիս կողմից վկայակոչված դատական պրակտիկան, որ հաստատվում է հիշյալ ժամանակահատվածում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված խնդրո առարկային վերաբերող բոլոր դատական ակտերի ուսումնասիրությունից: Միաժամանակ Խորհուրդը հարկ է համարում նշել, որ կատարված ուսումնասիրության արդյունքում եղել են Դատավորի ներկայացուցչի կողմից մատնանշված որոշ դեպքեր, սակայն դրանք իրենց նվազ քանակով չեն կարող գնահատվել որպես ընդունված և առկա դատական պրակտիկա՝ հետևաբար, Խորհրդի գնահատմամբ, Դատավորի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են դիտավորությամբ, քանի որ Դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Խորհուրդն, անդրադառնալով Դատավորի ներկայացուցչի ներկայացրած միջնորդությունների վերաբերյալ կայացված արձանագրային որոշումների հիմնավորումներին, հարկ է համարում նշել հետևյալը.

Դատավորի ներկայացուցչի Էմիլ Ամիրխանյանի կողմից Խորհրդի նախագահ Կ. Անդրեասյանին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու մասով, այն հիմնավորմամբ, որ Արդարադատության նախարար Գ. Մինասյանի և Խորհրդի նախագահ Կ. Անդրեասյանի կնոջ միջև առկա է տնտեսական շահ, ինչպես նաև վերջիններս ընկերներ են և սույն կարգապահական վարույթով Կ. Անդրեասյանը չի կարող գործել անկողմնակալ՝ Խորհուրդն արձանագրել է, որ Օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 5-րդ կետերի համաձայն՝ «Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլնի, այն դեպքերը, երբ

դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի (...) նկատմամբ, գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ նա անձամբ կամ նրա մերձավոր ազգականը տնտեսական շահ ունի (...) կողմերից մեկի հետ»:

Խորհուրդի գնահատմամբ Օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը սահմանված լինելով իբրև դատավորի անաչառության ապահովման երաշխիք, նպատակ ունի, ի թիվս այլնի, բացառել, որ դատավորը որոշում կայացնելիս կաշկանդած լինի կողմերից մեկի այնպիսի գործողությամբ կամ անգործությամբ, որը կարող է ֆինանսական հետևանքներ առաջացնել իր համար:

Միաժամանակ Խորհուրդն արձանագրել է, որ ինքնաբացարկի հիմք հանդիսացող տնտեսական շահի առկայությունը ենթադրում է այնպիսի իրավիճակ, երբ դատավորը կամ իր մերձավոր ազգականը մասնավոր կարգավիճակով պայմանավորված ունի այնպիսի շահ, որը կարող է ազդեցություն ունենալ իր լիազորությունների պատշաճ կատարման վրա: Այսպես, Օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի իմաստով տնտեսական շահ կարող է առկա լինել բացառապես այն պարագայում, երբ կողմերից մեկն ունենա այնպիսի առարկայական լծակներ, որոնք ուղղակիորեն կարող են ներազդել դատավորի կամ իր մերձավոր ազգականի տնտեսական շահերի վրա:

Ավելին, Խորհուրդն ողջամտորեն ենթադրել է, որ Արդարադատության նախարարն իրեն պատկանող բաժնեմասը հանձնել է հավատարմագրային կառավարման, դեռ ավելին, «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11.2-րդ կետի համաձայն «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է որևէ ձևով ազդեցություն գործել հավատարմագրային կառավարչի վրա կամ միջամտել հավատարմագրային կառավարման գործընթացին»: Այսինքն, օրենսդրական կարգավորումները հստակորեն բացառում են Արդարադատության նախարարի կողմից հավատարմագրային կառավարչի գործունեության և հետևաբար նաև հավատարմագրային կառավարման հանձնված գույքի նկատմամբ որևէ միջամտության կամ ազդեցության գործադրման հնարավորությունը: Ստացվում է, որ Արդարադատության նախարարը խնդրո առարկա գույքի նկատմամբ, չունենալով ազդեցության որևէ լծակ, չի կարող որևէ կերպ կաշկանդել Խորհրդի նախագահին իր պաշտոնական լիազորությունները իրականացնելիս:

Այսպիսով Խորհուրդն արձանագրել է, որ Դատավորի ներկայացուցչի կողմից ներկայացված հանրահայտ փաստերն ինքնին բավարար չեն եզրակացնելու, որ Կ. Անդրեասյանը կարող է դրսևորել կողմնակալություն: Ավելին, հարկ է արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Rustavi 2 Broadcasting Company Ltd-ը և այլք ընդդեմ Վրաստանի գործով* վիճարկվել է միաձայն որոշում կայացրած ինը դատավորից բաղկացած կազմը նախագահող դատավորի անկողմնակալությունը և ՄԻԵԴ-ը գտել է, որ խախտում առկա չէ⁹: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական

⁹ *Stu*, Case of *Rustavi 2 Broadcasting Company Ltd and others v. Georgia*, <https://hudoc.echr.coe.int/GEO#%22itemid%22:%22001-194445%22>, (§ 363):

դատարանը Fazlı Aslaner-ն ընդդեմ Թուրքիայի գործով արձանագրել է այն, որ դատավորներից ոմանց նախկինում որոշակի դիրք ունենալը, ինքնին բավարար չէ եզրակացնելու, որ ողջ կազմը եղել է կողմնակալ: ՄԻԵԴ-ն ընդգծել, որ նմանաբնույթ իրավիճակներում անհրաժեշտ է հաշվի առնել նաև այլ գործոններ, ինչպիսիք են ներգրավված դատավորների թիվը, ինչպես նաև նրանց դերը դատական կազմում¹⁰, իսկ խորհրդակցության գաղտնիության տեսանկյունից՝ անհնարին է գնահատել դատավորի/դատավորների ազդեցությունը¹¹: Ըստ ՄԻԵԴ-ի գնահատականի՝ կազմի անդամներից միայն մեկի օբյեկտիվ անկողմնակալության բացակայությունը վճռորոշ չէ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, քանի որ խորհրդակցության գաղտնիությունն անհնարին է դարձնում պարզելու դատավորի փաստացի ազդեցության բնույթը¹²:

Հետևաբար, վերը նշված հիմնավորումներով Խորհրդի նախագահ Կ. Անդրեասյանին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու մասին Դատավորի ներկայացուցչի միջնորդությունը մերժվել է:

Ինչ վերաբերում է Դատավորի և վերջինիս ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությանը՝ Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ, Խորհուրդը հարկ է համարում նշել, որ Դատավորի ներկայացուցչի կողմից, ըստ էության, վիճարկվող նորմի հակասահմանադրականության վերաբերյալ որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացվել: Մասնավորապես, ըստ Դատավորի՝ մինչև 06.07.2022 թվականին կատարված փոփոխությունն ու լրացումը Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով արդարադատություն կամ որպես դատարան օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական և դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով կարգապահական վարույթ չէր կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել էր ութ տարի, այսինքն՝ նման խախտման համար պատասխանատվության ենթարկելու ժամկետը երկարացվել է յոթ տարով:

Մինչդեռ, Խորհուրդը հարկ է համարում նշել, որ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-197-Ն սահմանադրական օրենքում կատարված փոփոխություններով նյութական կամ դատավարական իրավունքի խախտում հայտնաբերելու հիմքով կարգապահական վարույթ հարուցելու բացարձակ՝ ութ տարվա ժամկետը, որը հաշվարկվում է եզրափակիչ դատական ակտի ուժի մտնելուց հետո, որպես բացառություն չի կիրառվել, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի ուսումնասիրության արդյունքում վերհանվող խախտման հիմքով կարգապահական վարույթ հարուցելու դեպքերի նկատմամբ: Այսինքն, տվյալ դեպքում Օրենսգիրքը չի սահմանել արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ

¹⁰ Säu, Fazlı Aslaner v. Turkey, <https://hudoc.echr.coe.int/fre#%22itemid%22:%22002-9417%22>}, §§ 36-43:

¹¹ Säu, Stoimenovikj and Miloshevikj v. North Macedonia, <https://hudoc.echr.coe.int/fre#%22itemid%22:%22002-13189%22>}, §§ 39-41:

¹² Säu, Case of Karrar v. Belgium, <https://hudoc.echr.coe.int/fre#%22tabview%22:%22translation%22,%22itemid%22:%22001-211663%22>}, § 36:

լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերման առիթով կարգապահական վարույթ հարուցելու իրավական հնարավորության առավելագույն ժամկետը:

Ինչ վերաբերում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքին, ապա դրանով սահմանվել է մատնանշված առավելագույն ժամկետը, այն է՝ 15 տարի: Խորհրդի գնահատմամբ, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց 15 տարվա վաղեմության ժամկետի սահմանումն ինքնանպատակ չէ, ավելին ինչպես նշել է Վենետիկի հանձնաժողովը իր 2019թ. կարծիքում, սխալ չէ միջազգային դատարանների կողմից բացահայտված՝ մարդու իրավունքների խախտումների մասին օրենսգրքում ուղղակիորեն նշելը, եթե դատավորի գործողությունները կարող են դիտարկվել որպես դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ կատարված խախտումներ:

Հետևաբար, Խորհուրդը գտել է, որ ՀՀ սահմանադրական դատարանն ղիմելու և գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ ինչպես վերոնշյալ, այնպես էլ Դատավորի ու վերջինիս ներկայացուցչի կողմից ներկայացված այլ հիմնավորումներն անհիմն են և ենթակա են մերժման:

Ինչ վերաբերվում է Դատավորի և նրա ներկայացուցչի կողմից վկայակոչված ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 27.05.2008 թվականի թիվ ՄԴՌ-754 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին, ապա Խորհուրդը գտնում է, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ վերջիններիս կողմից ներկայացված փաստարկները ևս անհիմն են և Խորհրդի կողմից քննության առարկա չեն դարձվում:

Ամփոփելով վերոգրյալը և հիմք ընդունելով վերոնշյալ հիմնավորումները՝ Խորհուրդն արձանագրում է, որ վարույթ հարուցած մարմնի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտումներն ակնհայտորեն պայմանավորված են դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով: Ավելին, Խորհրդի գնահատմամբ Դատավորի կողմից դրսևորվել է բացարձակ կամայականություն՝ հանգեցնելով արդար դատաքննության իրավունքի խախտմանը, որը նախատեսված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի խախտման:

Գնահատելով Դատավորի կողմից թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման ակնհայտությունը՝ Խորհուրդն արձանագրում է, որ Դատավորին մեղսագրվող նյութական և դատավարական նորմերի խախտումների առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկներով: Խնդրո առարկա դատական գործի շրջանակներում կիրառելի իրավանորմերի հստակությունը և իմպերատիվ բնույթը թույլ է տալիս եզրակացնել, որ Դատավորն ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր տեղյակ լինել վերաբերելի իրավակարգավորումներին և դրանք խախտելու հնարավոր հետևանքներին: Նշվածը թույլ է տալիս ողջամտորեն եզրահանգել, որ Դատավորի կողմից վերոնշյալ նյութական և դատավարական նորմերի խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ:

Քննության առնելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցի ընտրության հարցը՝ Խորհուրդը գտնում է, որ ընտրվող պատասխանատվության միջոցը պետք է համաչափ լինի խախտմանը, որպիսի պարագայում անհրաժեշտ է նաև իրավական գնահատական տալ այն հարցին, թե արդյոք Դատավորի կողմից թույլ տրված արարքը բավարար հիմքեր է պարունակում վերջինիս կողմից թույլ տրված կարգապահական խախտումն էական գնահատելու համար և արդյոք դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ էական կարգապահական խախտում է՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակազրկման:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՉՕ-333-Ն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթով էական կարգապահական

խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Դատավորի կողմից թույլ են տրվել անձի արդար դատաքննության և սեփականության պաշտպանության իրավունքի խախտումներ և դրանք ակնհայտորեն պայմանավորված են եղել դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով՝ հաշվի առնելով բացարձակ կամայական կիրառման հանգամանքը:

Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Միաժամանակ Խորհուրդն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի խախտումը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է: Նշվածը հանգեցրել է ՀՀ սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտմանը, ինչպես նաև դատական իշխանության հեղինակազրկմանը: Ավելին, Դատավորի կողմից կատարված

խախտումը էապես նվազեցնում է դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և վնասում է դատավորի բարձր պաշտոնի հանրային ընկալմանը: Այսինքն՝ սույն դեպքում խոսքը վերաբերում է դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի արարքին:

Դատավորի կողմից Օրենսգրքի 142-րդ հոդվածի իմաստով «արարք» կատարելը ենթադրում է նաև դատական գործունեության ընթացքում դատավորի կողմից այնպիսի վարքագծի (ներառյալ՝ անգործության) դրսևորումը, որն ակնհայտորեն կարող է կասկածի տակ դնել արդարադատությունը ՀՀ սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված իրավական չափորոշիչներին համապատասխանելու հանգամանքը՝ խեղաթյուրելով դրա բուն էությունը: Եթե դատավորի պաշտոնավարման ընթացքում դատավորի վարքագիծը շեղվում է իրավական նորմերի մեկնաբանման և կիրառման ընդհանուր կանոններից, և դատավորը, դրսևորելով ոչ պատշաճ արհեստավարժություն ու մասնագիտական պատրաստվածություն, դուրս է գալիս իրավական նորմի գործողության շրջանակներից ոչ

թե զուտ նորմի սխալ մեկնաբանման կամ կիրառման արդյունքում, այլ իր սահմանադրաիրավական լիազորությունների վերազանցման պայմաններում, ապա այդպիսի արարքը կարող է բնութագրվել որպես դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի:

Այսպիսով, Դատավորն իր գործողություններում զերծ չի մնացել դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց, ուստի միջնորդության քննությամբ հաստատված փաստերի հաշվառմամբ, Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ Դատավորի կողմից թույլ տրված նյութական և դատավարական նորմերի խախտումներն էական կարգապահական խախտումներ են, որոնք համատեղելի չեն դատավորի կարգավիճակի հետ և ակնհայտորեն պայմանավորված են դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 155-րդ հոդվածով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արդարադատության նախարարի միջնորդությունը՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Մ. ՄԱԿՅԱՆ

Ա. ՄԽԻԹԱԼՅԱՆ

Վ. ԶՈՉԱԼՅԱՆ

Մ. ՉԻՉՈՅԱՆ